



05/28982-15
1/17.1/18079-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 1285-Ն

ք.Երևան

«10» 12 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 116-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1395-Ն որոշման 6-րդ կետի 1-ին
ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1527-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ
իրավիճակների նախարարության կանոնադրության 15-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝


1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի
2010 թվականի նոյեմբերի 18-ի «Աղետների բժշկության տարածաշրջանային
կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր
խմբագրությամբ հաստատելու մասին» N 116-Ն հրամանի վերնագրում և ամբողջ

տեքստում «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» բառերը փոխարինել «Աղետների բժշկության կենտրոն» բառերով:

2. Հաստատել «Աղետների բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. «Աղետների բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի 2-րդ կետով հաստատված կանոնադրության պետական գրանցումը:

4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



[Handwritten signature]

Ա.Երիցյան